կարչիս «Դարձ Զկնորաց ի վերջալուսին» նկարն՝ աքանչելի է պատկերացուցած տեսարանին բնականութեամբ, երեկոյացեալ լուսոյ խաղերով ջրոց վրայ, որոց մէջ ընտիր է նա և այն պէսպէս դիմաց և իրաց անդրադարձութիւնն. (Տես Դ)։

ՑՈՎՆԷ ԲԵՆԼԻՈՒՐ։ — Ծնեալ է ի Վալենտիա, ի 1 հոկտեմբերի, 1855 ամին. և սկսեալ ի 1878 ամէն՝ Հռոմի բնաֆող օտարազգի արուեստագիտաց գաղթականութեան կ'անդամանկցի։ Ասոր գործն է նա և մեր այս «Դերունի յաղթս» նկարն. (Տես Ե)։

ՎԱԼԹԷՐ ՓԻՐԼ։ — Ծնած է ի Բրեսլաւիա՝ յամի 1859, ի 29 օգոստոսի, և այժմ կու բնակի ի Միւնիխ Բաւիէրայի։ 1879էն սկսեալ մինչեւ 1888 պատկերատեցաւ Միւնիխի Գեղարուեստից ճեմարանին, երբ հոն կու դասախօսէր Լուդվիգ Լոֆց։ Ճարտարիս բնագրոշմն է զգայնութիւն, ոգեալ գրեթէ միշտ արտի հարուստ նիւթեր պատկերելու կու բերուի։ Ասրա գլխաւոր գործերն են՝ «Տօնական դպրոց», որ կու գտնուի Բուդա-Պեստի Թանգարանի մէջ, «Հաւատք»։ զարդ Լիպսիոյ պատկերասրահին, «Սգաւոր տունն», յատուկ Բրեսլաւիոյ Թանգարանին, և «Հայր մերն»։ Ասանց կարգին դասելի է և այս մեր հոս դրած «Թժըշկութիւն» նկարն. (Տես Ե)։

Շարայարելի.

---

## ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆՑ ԱՏԵՆԻ ՄԷՋ

### պաշտպան փաստաբանի մը Եորորինակ՝ բայց կրթիչ. ատենաբանութիւնը.

Գաղղիոյ սերագործութեանց ատենի մը մէջ դէպք մը պատահեցաւ, որուն վրայ ուշ դնել կ'արժէ։

Ամբաստանեալց աթոռին վրայ նստած էր ութուսանամեայ պատանի մը, Էմիլ Կօտօ անուամբ, ապականեալ էակի մը տիպար։

Ատենին նախագահն կ'ըսէ իրեն։

— Կօտօ, դու Ռօզին Մէնիէն սպանեցիր իւր 8 ֆրանքը գողնալու համար. անշուշտ եթէ գիտնայիր այսչափ քիչ բան ունենալը, չէիր սպաներ։

Կօտօ. — Եւ ինչո՞ւ։ ի՞նչ օգուտ հրնացեալ կմախքի մը ուելի կամ պակաս ըլլալէն, ես որ և է գնով կ'աշխատիմ։

Նախագահ. — Քու լրբութիւնդ նոյն իսկ վայրենիները կարող է զզուեցնել։ Հազիւ 18 տարեկան կաս և արդէն լի ես դատապարտութեամբ։ Ո՞վ սորուեցաց քեզ այսչափ անօրէնութիւն։

Կօտօ. — Ի՞նչ գիտեմ ես։

Նախագահ. — Կը խոստովանի՞ս ուրեմն, ինչ որ քու վրադ կ'ամբաստանուի։

Կօտօ. — Կը խոստովանիմ և եղածին վրայ կը ծիծաղիմ։

Նախագահ. — Երդուեալ դատաւորքն թող վճիռ տան։ Խօսելու կարգը պաշտպանին է։

Աբբեր. պաշտպանն. — Իմ գործս շատ դիւրին է։ Ամբաստանեալը լիովին կը խոստովանի։ Չի կայ պաշտպանութիւն մը՝ որ կարենայ օգնել։ Այնու հանդերձ, կ'ուզեմ քանի մը խօսք յաւելուլ։ Եթէ արդարութիւնը հաշիւ կը պահանջէ ամբաստանեալէն իւր եղերան համար, ներեցէք ինձ որ ես ալ հաշիւ մը պահանջեմ արդարութենէն իւր վճռոյն վրայ։ Ի՞նչ պիտի ըլլայ վճիռը կ'անդիմանամ, սակայն շատ լաւ գիտեմ որ կայ հոս անձ՝ եղեռնաւոր քան զյանցաւորն։ Այս եղեռնագործը, կամ լաւ ևս ըսեմ, այս եղեռնագործերը, պիտի ամբաստանեմ ձեզ։ Զարգացուցերը փոք էք, մվ տեսրք, որք հոս քաղաքային ընկերութիւնը կը ներկայացնէք, և այս ընկերութիւնը կ'ըստիպուի պատժելու այն յանցանքները։ զորս իւր անհոգութիւնը կամ իւր չար օրինակը

digitised by A.R.A.R.@

չի կրցաւ արդեւլուլ (Ռեկիդրաց մէջ շարժմունք)։

Կը նշմարեմ իմ առաջս և կը յարգեմ զպատկեր խաչելոյն։ Նա ներկայ է հոս ձեր դատարանին մէջ, ուր կը դատապարտէք զշարագործս։ Բայց ինչո՞ւ ներկայ չէ նա ձեր վարժարանաց մէջ՝ ուր կը կոչէք զմանկտին ի կրթութիւն։ Ինչո՞ւ կը պատժէք առաջի աչաց Աստուծոյ, զմարդիկ։ Ինչո՞ւ կօտոյին առաջին անգամ հոս կը ներկայացուի Աստուածն Գողգոթայի, որպէս զի տեսնէ թէ օրինօք կը դատապարտուի։

Եթէ կօտոյին ներկայացուած ըլլար խաչը, երբ կը նստէր նա վարժարանին դրասեղանաց առջև, կօտո հիմայ չէր գտնուէր նախատանաց այս նստարանին վրայ։ Ո՞վ ըսաւ երբեք կօտոյին, Աստուած մը կայ, ապագայ արդարութիւն մը կայ։ Ո՞վ խօսեցաւ անոր՝ հոգւոյ վրայ, պարտուպատշաճ յարգութեան վրայ առ իւր ընկերն, Աստուծոյ սիրոյն վրայ։ Ո՞վ սովրեցուց իրեն աստուածային պատուէրը. Մի սպանաներ։ Թոգուեցաւ այս հոգիս հպատակ իւր չար կրից. այս պատանիս տարբեցաւ ինչպէս կ'ապրին զգալանք յանապատի, միայնակ, այն ընկերութեան մէջ, որ կ'ուզէր զինքը սպանել իբրև վագր մի, մինչդեռ կրնար և պարտէր ամբել զնա իբրև զգան։

Այո՛, գո՛ւք էք, ո՛ տեարք, զորս կ'ամբաստանեմ։ գո՛ւք, որք կը պարծիք քաղաքակրթութեամբ, ոչ այլ ինչ էք բայց բարբարոսք. գո՛ւք բարոյականքդ, որք կը տարածէք ժողովրդեան մէջ անհաւատութիւն և պոծգրութիւնք, և կը զարմանաք ապա որ ժողովուրդը կը փոխարինեն ձեզ ոճրագործութեամբք և քաջքայմամբ։ Պատժեցէք իմ պաշտպանեալս, իրաւունք ունիք, բայց եռ զձեզ կ'ամբաստանեմ, և այս է իմ պարտքս։

Այս խօսքերուս ծափահարութիւնք պատասխանեցին ատենին մէջ։ Նախագահը լռեցուց։

Երդուեալ դատաւորք առանձնացան։ Քանի մը վայրկենէն կարդացուեցաւ վճիռը և կօտո մահուան դատապարտուեցաւ։

Պաշտպան փաստաբանը կը բարձրացնէ ձայնը առ խաչն, և կը գոչէ. Աստուած պիտի դատէ զդատաւորս։

# Ա. Զ Ա.

*1. — Որ և իցէ գիրք՝ թէ՛ հեղինակութիւն և թէ թարգմանութիւն, որ խմբագրութեանս նուէր զրկուի, ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ երկամեայ պրակաց մէջ պիտի ծանուցուի Նոր հրատարակութիւնք խորագրով։*

*2. — Այն հեղինակներն և կամ թարգմանիչք՝ որոնք փոխանակութեամբ իրենց գրոց կը ցանկան մեր տպած (նոյնագին) գրքերէն ունենալ, պէտք են առաջուց իմացնել մեզ՝ թէ ինչ գիրք է յղելիքը, և ինչ անուր փոխարէն պահանջելիքը։*

digitised by A.R.A.R.@